



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի Ն



Ոկտեմբերի 2-ին լրացավ Վեհափառ Հայրապետի գահակալության հինգերորդ տարեդարձը:

Այս տարի նորին Ս. Օծուրյան գահակալության տոնի ուրախություններն ու հանդիսությունները զուգադիպեցին նրա արտասահմանում կատարած հովվապետական այցելությունից ողջամբ Մայր Աթոռ Վերադառնալու տոնական օրերի ցնծություններին:

Ավելի քան 4 ամիս, Վեհափառ Հայրապետը, հովվապետական գավազանը ձեռնի, որպես քաջ և անձեղի՜ր հովիվ, Աստվածայանի և Խաղաղականի հեռավոր ափերի վրա ցրված Իր զավակներին, Հայաստանյայց եկեղեցիներին, անխտիր, անձամբ տարավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունն ու մեր ծաղկած Հայրենիքի և նրա երջանիկ ժողովրդի շնորհակցին սերն ու եղբայրական ողջույնը, մի անգամ ևս լինելով ռուհեղեն կամուրջ՝ հայության երկու մեծ զանգվածներին միջև:

1960 թվականի մայիս—սեպտեմբեր ամիսներին, Վեհափառ Հայրապետի խաղաղության ուղևորությունը մեծ իրադարձություն հանդիսացավ Սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքում:

Պատմության մեջ առաջին անգամն էր, որ Ամենայն Հայոց Հայրապետը այցելում էր հեռավոր Ամերիկաների Իր զավակներին: Այդ պատմական ու շնորհաբեր այցելության բարի նպատակն էր՝ միաժամանակ ծանոթանալ ԱՄՆ-ի հայության ազգային-եկեղեցական կյանքին, «ՀԱՄԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՎԱՏԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՑԻՆԵՐԻՆ»

ՀԱՅՈՒ ՍՈՒՐԲ ՄԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ», ինչպես նշվել է Վեհափառ Հայրապետի մեկնման բարեբափառի առիթով Գերագույն Հոգևոր Խորհրդի մայիս 7 թվականի պաշտոնական հաղորդագրության մեջ:

Վեհափառ Հայրապետը արտասահմանում Իր հովվապետական հայրենասեր զավակների կողմից արժանացել է փառանքի և սրտագին քննությունների: ԱՄՆ-ի հայությունը զգաց, տեսավ, որ Ամենայն Հայոց Հայրապետությունը, ինչպես միշտ, և այսօր մանավանդ, հայ կյանքում իր առաջնությունը հանդիսանում է ՀԱՅՈՒՆ ՀԱՎԱՏԻ ԲԱՐՁՐ ԲԵՐԴԸ, ՀՈՐԵՎՈՐ ԿԱՄՈՒՐԶԸ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԼԱՍՏՐԻՆ: Եկեղեցական մեջ ծիսացող հայության համար, լույս՝ մուրի դեմ, միություն՝ բաժանման դեմ, անխորտակելի ամբարտակ՝ ձուլման դեմ:

Վեհափառ Հայրապետը Իր շնորհաբեր այցելությամբ, Իր քաղաքներում և երկրներում, Իր հայրական քաղցր վերաբերմունքով, անմոռանալի և անհնչելի տպավորություն է թողել ամենուրեք, ամեն սրտի և բոլոր հոգիների մեջ: ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՀԱՅՈՒՆԻՆՆԵՐԸ ՍԻՐԵՑ ՎԵՃԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՎ ԻՐ ԶԵՐՄ ՄՐՏԻ ՄԵՋ: Ահա քե ինչու ամեն տեղ փառանքի քննություններով էին դիմավորում Ամենայն Հայոց Հայրապետին և անսահման հետաքրքրությամբ էին լսում նրա ձայնը, որ հնչում էր հստակ, հասկանալի, չեմ ու հաղորդական:

Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ եղել է 7 երկրներ՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ,

Պարտուգլխա և Ֆրանսիա, այցելել է ավելի քան հիսուս մեծ և փոքր քաղաքների և արվարձանների հայկական համայնքներին, հայաբայա քեկուրուրիս, որոնք ծպարած ալլուրս են Հայ եկեղեցու հոսկանու տակ, Ս. էշմիածնից հոսագայրոյ լուսի, Մայր Հայրենիքից ծագող արևի ջերմության ներքին:

«Ճանաչ ելանք,— ասում է Վեհափառ Հայրապետ Մայր Տանարում հոկտեմբերի 7-ին արտասանած իր գեղեցիկ քարոզի մեջ,— փնտռելու և գտնելու Մեր ցիրուցան պանդուխտ զավակները, Մեր սիրելիները, Մեր հարագտները՝ քաշխելու համար անոնց բոլորին ափ մը լույս կոսավորչի անմար կանթեղին և օրհնություն, օրհնություն աստվածային Փրկչի էջման այս Ս. Տանարեն: Մեզի հետ տարինք նաև ծաղկած հյուսիս վերքերնայած Արարատյան աշխարհին, մեր ծաղկող Մայր Հայաստանին»:

Արդարև մեծ է և հսկայական ու ամեն զնահատանգի արժանի ՆՈՐԻՆ Ս. ՕՍՈՒԹՅԱՆ ԱՅՍ ԱՅՅԻ ՀՈԳԵՎՈՐ-ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ եվ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Հայկական այն համայնքները, որոնց այցելել է Վեհափառ Հայրապետը, միշտ խոր հուզմամբ կնիչեն պատմական այս այցելությունը: Հայ ժողովուրդը ամեն տեղ անսահման սիրով և ցնծությամբ, բացառիկ մեծարանքի արտահայտությամբ հարգանքներով է դիմավորել իր սիրելիյա և անձնդիր Հայրապետին:

«Իրենց սրտերը բացին,— ասում է Վեհափառ Հայրապետը,— և անհագ ծարավով լույս խմեցին և քուր կենարար՝ աստվածապարզ և այս էջման տեղին և Հայրենի աշխարհի աղբյուրներին: ...Ամեն տեղ գտանք նույն հայ ժողովուրդը նույն քրիստոնեական հավատով, նույն հայկական շունչով, նույն հայրենասիրությամբ, նույն իղձերով և հուսերով դեպի ամենայն հայաց Ս. էշմիածինը, դեպի մեր վերածնած Մայր երկիրը և դեպի մեր ժողովուրդի ոսկի ապագան: Եվ ամեն տեղ հայությունը ա՛յդ հոգին, ա՛յդ հույզերն ու ապրումները հորդաուտ հոսքան անգուսպ պտուղկումներով, ալիքներումներով, հրավառ խոսքերով, զգացումներով և մտածումներով սփռելիք արտահայտությամբ կերպերով, խորապես նշմարիտ, խորապես հուզիչ, վսեմ և տուրք»:

Արդարև, այս բարեբաստիկ այցելությամբ է՛լ ավելի խորացավ հայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ Ս. էշմիածինը և նրա արժանավոր Գանակալը, է՛լ ավելի ծաղկեցին ԱՄՆ-ի հայության հույսերը դեպի Հայ եկեղեցու և Ազգի պայծառ ապագան:

Վեհափառ Հայրապետի այցելությունը համազգային, համահայկական ցնձառուն էր բոլոր հայերի համար:

Եվ պատահական չէր, որ այդ այցը իր վրա է հրավիրել միշտ մամուլի, հասարակայնության սենյուն ուշադրությունը:

Ամենայն Հայոց Հայրապետ իր ուղևորության ժամանակ արժանացավ նաև քրիստոնեական բոլոր եկեղեցիների կրոնական պետերի և կառավարական բարձրաստիճան անձնավորությունների հարգալիք ընդունելության:

Հունիսի 14-ին, Ամենայն Հայոց Հայրապետի բարձր պատվին Հարվորդի համալսարանում կազմակերպված ընդունելության ժամանակ, աստվածաբանական ամբիոնի վարիչ դոկտ.-պրոֆ. Սամվել Միլլերը, հանուն համալսարանի պրոֆեսոր-դասախոսական կազմի, ջերմորեն ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին, խոսում է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պատմական դերի և առաքելության մասին քրիստոնեական մշակույթի տարածման սրբազան գործում, և եզրակացնում է խոսքը ուղղելով հայ ժողովրդին. «ԵՐԱՆԻ՝ ՁԵՁ, ՈՐ ԷՋՄԻԱՍԻՆ ՈՒՆԵՔ»:

Վեհափառ Հայրապետի խաղաղության առաքելության հիմնական նպատակներից մեկն էր նաև «իրականացած տեսնել մեր եկեղեցվո ներքին միության և խաղաղության գործը, մեր դարավոր կանոններու և ավանդույթների և նվիրապետական պատմական իրավասությանը լույսին տակ, Հայ եկեղեցվո և հայ ժողովուրդի գերագույն շահերու գիտակցությամբ, Մեր 25 ապրիլի կոնգակի ոգիով»:

Հայրապետական սրբատառ կոնգակում արտահայտված Վեհափառ Հայրապետի խաղաղության, սիրո և միության կոչերը ժամանակին լսվեցին անսահման հետաքրքրությամբ և ընդունվեցին գոհունակությամբ և ուրախությամբ:

Ս. էշմիածնի հոգևոր բարձունքից և Ամենայն Հայոց Հայրապետի անսուտ քերական հայտարարված սիրո և միության այդ սրտազին կոչը ծանոթ տազնայի լուծման քնական և օրինական եղանակներ: Այդ պատճառով կոնգակի գաղափարները խոսքերով եղավ խաղաղապետ և հոգեպարար: Իր ուղևորության ողջ ընթացքում, Վեհափառ Հայրապետը ամեն տեղ խոսել, քարոզել և պատգամել է կոնգակի այդ խաղաղության, սիրո և միության ոգով, արժանանալով ամենուրեք միահամուտ հավանության, ընդունելության և պաշտպանության, նույնիսկ արհեստական այդ տազնայի տեղի ժողովուրդի փորձող մարդկանց շրջանակում: Ապրիլի 25-ի կոնգակը խոր ար-

ծագանք է գտել ամեն ազնիվ հայ մարդու սրտում, որն ունի ազգային-եկեղեցական րնդեանուր գիտակցություն:

Անքիլիասի Գահակալը դեռ չի պատասխանել Ամենայն Հայոց Հայրապետի ապրիլ 25-ի սիրո և միության հրավերին, որ հասցեագրված էր առաջին հերթին Անքիլիասին, և որտեղ շատ հստակ կոնկրետ և շեմ կերպով բանաձևված էր Մայր Աթոռի առաջարկը: Սակայն Վեհափառ Հայրապետը երբեք չի կորցրել Իր լավատեսությունը՝ Հայ եկեղեցու ներքին միությունը և խաղաղությունը վերականգնելու Իր ճիգի մեջ, խորապես համոզված լինելով, որ Անքիլիասը ի վերջո կկանգնի ազգոգուտ և եկեղեցաշեն նիշտ ուղու վրա՝ հրաժարվելով Իր այժմյան սխալ հանապարհից:

Եվ ահա, այսօր էլ, արտասահմանում Իր կատարած հովվապետական ուղևորությունից Մայր Աթոռ վերադառնալու առաջին իսկ օրը, Ս. Լուսավորչի Գահից, մի անգամ ևս Վեհափառ Հայրապետը միության սրտագին կոչ է անում Անքիլիասին:

«Մենք և Անքիլիասի Մեր եղբայրները զիրար պիտի ողջունենք եղբայրական հարազատությամբ, և ձեռք-ձեռքի տված, միասնաբար պիտի աշխատենք մեր ժողովուրդի հոգևոր կյանքին շինության, մեր Ս. եկեղեցվի զորացման և ծաղկման, մեր եվրոպետական Աթոռներու ամրապնդման համար: Վասնզի, առանց հայրենի եկեղանի իրակալության, Սփյուռք ունայնություն է, առանց Ս. էջմիածնի՝ Անքիլիաս հուսահատություն է: Ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. էջմիածինը միշտ դավանած է և պիտի դավանի մեկ Հայ եկեղեցի, մեկ Հայ Ազգ, մեկ Հայ Հայրենիք, մեկ նախատգիր և մեկ ապագա: Մենք, այս ոգիով, այս գիտակցությամբ, Աստուծո օգնությամբ և Ս. էջմիածնի անեղ զորության, հայ ժողովուրդի հոգևոր-ազգային միասնության և անբաժանելիության նվիրական դրոշմ Մեր ձեռքին, դեպի հառաջ

պիտի ընթանանք՝ կենդանի, ամբողջ և անխռով պահելու, պահպանելու համար Հայաստանայալ Ս. եկեղեցին և Սփյուռքի համայն մեր ժողովուրդը, Իր սուրբ հավատքի վեմին և Իր ազգային ուխտին վրա՝ անսասան և ապահով»:

Վեհափառ Հայրապետը Իր այցելության հանապարհի վրա, ամեն տեղ, ստեղծել է ՈԴԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ Հայ եկեղեցու, Ս. էջմիածնի և հայ ժողովուրդի ՆՈՐԿԱՅԻ մասին և ՀԱՎԱՍՏ՝ ԱՊԱԳԱՅԻ վերաբերյալ, այն պայծառ գիտակցությամբ, որ օտար հողի վրա, հայ ոգին կտկարանա և կհանգի առանց Ս. էջմիածնի յույսին և հավատին և առանց Մայր Հողի պատվաստին:

Վեհափառ Հայրապետը վերադարձել է խանդավառությամբ, ոգևորությամբ, ավելի քան լավատես, մխիթարված և զորացած Իր զավակների սիրով, նվիրումովը դեպի Ս. էջմիածինը, և ավելի վնասկան՝ բարձր պահելու Հայ եկեղեցու սիրո և միության և հայ ժողովուրդի միասնականության սրբազան դրոշմը:

Դահակություն հինգ տարիների սրտնոսեղև ու ոգևորիչ գործունեությունը սրտառույզ գրավական է այն բանի, որ հանձին տրին Ս. Օծության, Հայաստանայալ եկեղեցին ունի մի զոհաբերվող Հայրապետ, որ ի ի երկնառաք եերշնչմամբ և սիրով դեպի եկեղեցին և Ազգը, որնեց բարօրությունն ու ծաղկություն եւ ու կմեան Նրա կյանքի միակ նպատակը:

Վեհափառ Հայրապետի զահակալության հինգերորդ տարեդարձի այս բարեբախտիկ առիթով, հայ ժողովուրդի սրտագին մաղթանքն է, որ Լուսավորչի Աթոռի վրա Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի զահակալությունը լինի երկարատև և միշտ արդյունավետ, ի փառս և ի պայծառություն Հայաստանայալ եկեղեցու, ի շինություն և ի ծաղկումն Մայր Հայրենիքի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովուրդի:

